

Հաստատված է՝

«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան

պետական մանկավարժական ինստիտուտ»

ՊՈԱԿ-ի գիտական խորհրդի

**«15» նոյեմբերի 2016 թ. նիստում**

Խորհրդի նախագահ՝ \_\_\_\_\_ Ս. Մինասյան

## **ԸՆԹԱՑԱԿԱՐԳ**

**«ԳՅՈՒՄՐՈՒ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐՇԱԿԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՆՀԱՏԱԿԱՆ  
ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ**

### **1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1.1. Մագիստրոսի կրթական ծրագրով լրացուցիչ անհատական խորհրդատվության կազմակերպման նպատակն ուսանողին սոցիալական աջակցության, շարունակական ու որակյալ կրթության ապահովումն է:

1.2. Լրացուցիչ անհատական խորհրդատվություն թույլատրվում է.

- ա) մասնագիտությամբ աշխատողներին,
- բ) մինչև 3 տարեկան երեխա ունեցողներին,
- գ) բարձրակարգ և ՀՀ ազգային հավաքականի մարզիկներին, մարզիչներին,
- դ) պայմանագրային զինծառայողներին:

## 2. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

- 2.1. Լրացուցիչ անհատական խորհրդատվություն ստանալու համար ուսանողը տվյալ կիսամյակի համար ներկայացնում է դիմում (տե՛ս հավելված 1) և համապատասխան փաստաթղթեր (տե՛ս հավելված 2):
- 2.2. Դիմումը քննարկվում է ռեկտորի նախագահությամբ ձևավորած հանձնաժողովում, որտեղ ի պաշտոնե անդամներ են համարվում ուսումնագիտական և արտաքին կապերի գծով պրոռեկտորը, համապատասխան ֆակուլտետի դեկանը, ամբիոնի վարիչը: Հանձնաժողովի կողմից թույլտվություն ստացած ուսանողի համար, 10 օրվա ժամկետում թողարկող ամբիոնի վարիչի ղեկավարությամբ, դասավանդող դասախոսների մասնակցությամբ ուսանողի հետ կազմվում է լրացուցիչ անհատական խորհրդատվության ժամանակացույց / տե՛ս հավելված 3/, որը հաստատվում է տվյալ ֆակուլտետի խորհրդի կողմից:
- 2.3. Անհատական ժամանակացույցով լրացուցիչ խորհրդատվության պլանի կատարման վերահսկողությունն իրականացնում է ֆակուլտետի դեկանատը, թողարկող ամբիոնը և ուսումնական խորհրդատուն:
- 2.4. Ուսանողի դիմումի համաձայն (ուսանողի ցանկությամբ կամ լրացուցիչ անհատական խորհրդատվության թույլտվության պատճառների փոփոխությունների դեպքում) անհատական խորհրդատվությունը կարող է ընդհատվել մինչև տվյալ կիսամյակի հերթական միջանկյալ առաջին քննությունը:
- 2.5. Դեկանատը տվյալ ակադեմիական խմբի մատյանում կատարում է նշում ուսանողի անհատական լրացուցիչ խորհրդատվության վերաբերյալ:

## 3. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

- 3.1. Լրացուցիչ անհատական խորհրդատվություն յուրաքանչյուր ուսանողի հետ տվյալ առարկայի շրջանակում անցկացվում է ամիսն առնվազն մեկ անգամ, անկախ ակադեմիական խմբի հետ հաճախելիության աստիճանից:
- 3.2. Լրացուցիչ անհատական ժամանակացույցով խորհրդատվության կիսամյակային պլանը ներառում է.
  - ա) կրթական ծրագրի ուսումնական պլանի տվյալ կիսամյակի առարկաների ցանկը,

բ) առարկաներին հատկացված խորհրդատվության օրերը, նշումներ առաջադրանքների կատարման վերաբերյալ:

3.3. Ուսանողը, բոլոր տեսակի քննությունները (միջանկյալ, ամփոփիչ) հանձնում է այդ քննաշրջանի համար նախատեսված ժամանակահատվածում՝ ընդհանուր հիմունքներով, ինչպես տվյալ ակադեմիական խմբի բոլոր ուսանողները:

3.4. Լրացուցիչ անհատական ժամանակացույցով խորհրդատվության ստացող ուսանողների գիտելիքների գնահատումը իրականացվում է բազմագործոնային «ԳՊՄԻ -ի բակալավրիատի առկա/հեռակա և մագիստրատուրայի կրեդիտային կրթական ծրագրերով ուսումնառության արդյունքների գնահատման և բողոքարկման ընթացակարգ» կարգով:

3.5. Լրացուցիչ անհատական ժամանակացույցով խորհրդատվության ստացող ուսանողներին կրթաթոշակ, նպաստներ հատկացվում է համաձայն բուհում գործող կանոնակարգի՝ «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ պետական ոչ առևտրային կազմակերպության ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգ»:

Գյումրու Մ. Նալբանդյանի անվան  
պետական մանկավարժական ինստիտուտի  
ռեկտոր պրն. Ս. Մինասյանին  
նույն իստիտուտի \_\_\_\_\_ ֆակուլտետի  
ֆակուլտետի անվանումը

\_\_\_\_\_ մասնագիտության  
մասնագիտության անվանումը

մագիստրոսական կրթական ծրագրով սովորող  
առկա ուսուցման համակարգի \_\_\_\_\_ կուրսի  
\_\_\_\_\_ կիսամյակի ուսանող

\_\_\_\_\_ անուն, ազգանուն

\_\_\_\_\_ հեռախոսահամար

### ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ինձ 2016-2017 ուստարվա I կիսամյակում թույլատրել տրամադրելու  
լրացուցիչ անհատական խորհրդատվություն, քանի որ աշխատում եմ թիվ 11 դպրոցում  
որպես հոգեբան և հաճախակի եմ բացակայում կազմակերպված դասընթացներից:

Կից ներկայացնում եմ համապատասխան փաստաթղթերը:

Դիմող՝

/անուն, ազգանուն/

20.10.2016թ.

Լրացուցիչ անհատական խորհրդատվություն կազմակերպելու համար ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

- անձնագրի պատճեն,
- 1.2. կետի համապատասխան՝

ա) տեղեկանք աշխատավայրից

բ) մինչև երեք տարեկան երեխայի ծննդականի պատճենը

գ) սպորտկոմիտեից միջնորդագիր

դ) պայմանագրային զինծառայության վերաբերյալ տեղեկանք:

Հավելված 3

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ուսանող՝ \_\_\_\_\_

Ֆակուլտետ \_\_\_\_\_

Կրթական ծրագիր \_\_\_\_\_

Կուրս \_\_\_\_\_, կիսամյակ \_\_\_\_\_

N	Առարկաների /դասընթացների/ ցանկը	Առարկայի լսարանային ժամաքանակը	Խորհրդատվության օրերը	Նշումներ հանձնարարությունների կատարման մասին	Դասախոսի ստորագրությունը
1.					

Ուսանող՝

\_\_\_\_\_

/անուն, ազգանուն/

Ստորագրություն

Ուսումնական խորհրդատու՝

\_\_\_\_\_

/անուն, ազգանուն/

Ստորագրություն

Ամբիոնի վարիչ՝

\_\_\_\_\_

/անուն, ազգանուն/

Ստորագրություն

Ֆակուլտետի ղեկան

\_\_\_\_\_

/անուն, ազգանուն/

Ստորագրություն